Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունիսի 25-ի N 913 - Ն որոշման

«Ձև ԴՎ N 1

Դ Ի Մ Ո Ւ Մ ՎՃԱՐՈՂԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից)							
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)								
2. Հարկ վճարողի անվանումը կամ անունը, ազգանունը								
3. Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ)								
4. Հարկ վճարողի գտնվելու (բնակության) վայրը								
5. Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը								

Խնդրում եմ սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարի գումարի մնացորդից վերադարձնել՝

NN ը/կ	Բանկի անվանումը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Բանկային հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները				Իրավահաջորդ կազմակերպության տվյալները		Կազմակերպության մասնակից կազմակերպության տվյալները		Վերադարձման ենթակա գումարը (դրամ)
-1-	-2-	-3-	-4-				-5-		-6-		-7-
			Անունը, ազգանունը, հայրանունը	Ծննդյան ամսաթիվը	Անձնագրի սերիան և համարը (նույնականացման քարտի համարը)	Անձնագրի (նույնականացման քարտի) տրման ժամկետը և ծածկագիրը (ում կողմից)	ՀՎՀՀ	Անվանումը	ՀՎՀՀ	Անվանումը	
			-4.1-	-4.2-	-4.3-	-4.4-	-5.1-	-5.2-	-6.1-	-6.2-	
Ընդամենը											

Պատասխանատու անձի _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Վճարողի սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարի գումարի մնացորդի վերադարձի դիմումի լրացման կարգը

1. 1-ին տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).
2. 2-րդ տողում լրացվում է հարկ վճարողի անվանումը: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի անվանումը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ «ԱՁ» նշումը, անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը.
3. 3-րդ տողում լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի ՀԾՀ-ն կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. 4-րդ տողում լրացվում է հարկ վճարողի գտնվելու վայրը: Իրավաբանական անձի դեպքում լրացվում է իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրը.
5. 5-րդ տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը.
6. Կազմակերպությունների վերակազմակերպման, կազմակերպությունների լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի մահվան դեպքերում դիմումի 1-5-րդ տողերում լրացվում են, համապատասխանաբար՝ իրավանախորդ կազմակերպության, լուծարված կազմակերպության, մահացած անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի տվյալները՝ սույն լրացման կարգի 1-5-րդ կետերին համապատասխան.
7. Աղյուսակի 1-ին սյունակում լրացվում է տողի հերթական համարը.
8. Աղյուսակի 2-րդ սյունակում լրացվում է այն բանկի անվանումը, որին պետք է փոխանցել հարկ վճարողին, ֆիզիկական անձին վերադարձման ենթակա գումարը.
9. Աղյուսակի 3-րդ սյունակում լրացվում է այն բանկային հաշվի համարը, որին պետք է փոխանցել հարկ վճարողին, ֆիզիկական անձին վերադարձման ենթակա գումարը.
10. Աղյուսակի 4-րդ սյունակում լրացվում են այն ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, որին պետք է փոխանցվի սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարից վերադարձման ենթակա գումարը: Սյունակը լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի մահվան դեպքում գումարները ժառանգին վերադարձնելու, բանկային հաշիվներ չունեցող հաշվառումից հանված անհատ ձեռնարկատերերին և պաշտոնից ազատված նոտարներին գումարները վերադարձնելու, բանկային հաշիվներ չունեցող՝ լուծարված կազմակերպության մասնակից ֆիզիկական անձին վերադարձնելու դեպքերում.
11. Աղյուսակի 4.1-ին ենթասյունակում լրացվում են ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը.
12. Աղյուսակի 4.2-րդ ենթասյունակում լրացվում է ֆիզիկական անձի ծննդյան ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին.
13. Աղյուսակի 4.3-րդ ենթասյունակում լրացվում են ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը (նույնականացման քարտի դեպքում՝ քարտի համարը).
14. Աղյուսակի 4.4-րդ ենթասյունակում լրացվում են ֆիզիկական անձի անձնագրի (նույնակա-նացման քարտի) տրման ժամկետը և ծածկագիրը (ում կողմից).
15. Աղյուսակի 5-րդ սյունակում լրացվում են բանկային հաշիվներ չունեցող՝ վերակազմակերպված կազմակերպության իրավահաջորդ կազմակերպության տվյալները, որին պետք է փոխանցվի սահմանված չափից ավելի վճարված դրոշմանիշային վճարից վերադարձման ենթակա գումարը.

16. Աղյուսակի 5.1-ին ենթայունակում լրացվում է իրավահաջորդ կազմակերպության ՀՎՀՀ-ն,
17. Աղյուսակի 5.2-րդ ենթայունակում լրացվում է իրավահաջորդ կազմակերպության անվանումը.
18. Աղյուսակի 6-րդ սյունակում լրացվում են բանկային հաշիվներ չունեցող՝ լուծարված կազմակերպության մասնակից կազմակերպության տվյալները, որին պետք է փոխանցվի միասնական հաշվից վերադարձման ենթակա գումարը.
19. Աղյուսակի 6.1-ին ենթայունակում լրացվում է մասնակից կազմակերպության ՀՎՀՀ-ն.
20. Աղյուսակի 6.2-րդ ենթայունակում լրացվում է մասնակից կազմակերպության անվանումը.
21. Աղյուսակի 7-րդ սյունակում լրացվում է հարկ վճարողին վերադարձման ենթակա գումարի չափը.
22. Աղյուսակի «Ընդամենը» տողում լրացվում է աղյուսակի 7-րդ սյունակում լրացված գումարների հանրագումարը.
23. Դիմումի «Պատասխանատու անձի» տողում լրացվում են դիմումը ներկայացնող հարկ վճարողի պատասխանատու անձի ստորագրությունը, անունը, ազգանունը։»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ